Հաստատված է
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2019 թվականի մարտի 5-ի նիստում

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր

Բովանդակություն

1. Ներածություն_____3

2. Տեսչական մարմնի տարեկան գործունեության ուղղությունները _____ 4

3. Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտվածռիսկերը_____ 10

4. Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը_____ 15

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2019 թվականի գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինն իրականացնում է վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ, օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառներում: Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմինը, ձևավորվելով ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ, չի ունեցել 2018թ. գործունեության տարեկան ծրագիր, առ այսօր դեռևս ամբողջությամբ համալրված չէ աշխատակիցներով (կադրային առաջին համալրումը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 03-ից՝ մասնակի), համապատասխան փոփոխություններ դեռևս չեն կատարվել նաև օրենսդրական դաշտում, ինչի հետևանքով հնարավոր չի եղել լրիվ ծավալով գործունեություն իրականացնել, ստուգումներ անցկացնել, պատասխանատվության միջոցներ կիրառել:Այնուհանդերձ, իր իրավասության շրջանակներում, 2018 թվականի ընթացքում ծավալել է տնտեսվարող սուբյեկտների իրազեկման միջոցառումներ, օպերատիվ կերպով արձագանքել է հանրության կողմից բարձրացված և լայն արձագանք ստացած խնդիրներին,իրականացրել ակտիվ խորհրդատվական գործունեություն, կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ:

2. Տեսչական մարմնի տարեկան գործունեության ուղղությունները

Տեսչական մարմինը,Կանոնադրությամբ վերապահված իրավասությունների շրջանակներում, 2019 թվականի ծրագրում առանձնացրել է գործունեության հետևյալ հիմնական ուղղությունները.

1. ***Քաղաքաշինության բնագավառում***

Ռիսկի մեթոդաբանության հիման վրա գնահատված առավել ռիսկային օբյեկտների ցանկը հնարավություն կտա ստուգումներ իրականացնելիս առավել օպտիմալ օգտագործել մարդկային ռեսուրսը և ավելացնել ստուգվող օբյեկտների քանակը:

Քաղաքաշինության ոլորտում քաշաքաշինական նորմերի պահպանման, և ստուգումների ընթացքում բացահայտված խախտումների, հետագայում դրանց կանխարգելման և բացառման նպատակով թիրախավորվել են հետևյալ ուղղությունները. նախկինում կատարված ստուգումների արդյունքներից ելնելով առավել ռիսկային են համարվում հասարակական, արտադրական,բազմաֆունկցիոնալ շենքերը,բազմաբնակարան բնակելի և բնակելինպատակային նշանակություն ունեցող շինարարական օբյեկտները, ուստի տարեկան ծրագրում նախատեսվում է ներառել հենց այդ նպատակային նշանակության օբյեկտները՝ առաջնահերթ համարելով ռիսկի մեթոդաբանությամբ հաշվարկված առավել ռիսկային համարվող, առավել բարձր ռիսկային գործոն ունեցող օբյեկտները:

1. Մշակված ռիսկի մեթոդաբանության հաշվարկներով և նախկինում կատարված ստուգումների արդյունքներում առավել ռիսկային խմբի մեջ են մտնում հասարակական նշանակության օբյեկտները՝ որոնք, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են՝

ա. կրթական և ուսումնական նշանակության շենքեր՝ նախադպրոցական, հանրակրթական (տարրական, հիմնական, միջնակարգ, հատուկ), նախնական մասնագիտական ուսումնարաններ, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության (այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության) ուսումնական հաստատություններ.

բ.առողջապահության, սոցիալական ապահովության, սպորտի, հանգստի և ժամանցի համար նախատեսված շենքեր և շինություններ՝հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, հոսպիտալներ, շտապ բուժ. օգնության կայաններ, ծննդատներ, դեղատներ, առողջարաններ, հանգստյան տներ (պանսիոններ), հյուրանոցներ, մանկատներ, ծերանոցներ, մարմնակրթական և սպորտային կենտրոններ, ստադիոններ, լողավազաններ, հրաձգարաններ, սպորտային դահլիճներ, ատրակցիոններ.

գ. մշակույթի, արվեստի շենքեր և շինություններ՝ գրադարաններ, թանգարաններ, ցուցասրահներ, պատկերասրահներ, կուլտուրայի տներ, թատրոններ, կինոթատրոններ, համերգային և մարզահամերգային համալիրներ, կրկեսներ.

դ. առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքեր և շինություններ՝ խանութներ, շուկաներ, տոնավաճառներ, ռեստորաններ, սրճարաններ, վառելանյութի լիցքավորման կայաններ, ավտոտեխսպասարկման կայաններ, ավտոկայանատեղեր.

ե. վարչակառավարչական, ֆինանսական, կապի և տրանսպորտի շենքեր և շինություններ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, վարչական հիմնարկներ, բանկեր, տարբեր տիպի գրասենյակներ, տրանսպորտի բոլոր տիպի կայաններ (ավտոկայաններ, օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ և այլն), ուղևորների սպասարկման գրասենյակներ, դեսպանատներ, հյուպատոսարաններ, միջազգային կազմակերպություններ.

2. Տեսչական մարմինը թիրախային է համարում և նախատեսում է հսկողություն իրականացնել նաև արտադրական նշանակության՝ արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքերում և շինություններում,որոնք,ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են՝

ա. արդյունաբերական շենքեր՝ գործարաններ, ֆաբրիկաներ, տարբեր տիպի էլեկտրակայաններ և ենթակայաններ, ձկնաբուծարաններ և ձկնաբուծական լճեր, արհեստանոցներ, տարբեր տիպի արտադրամասեր, կոմբինատներ, լեռնահանքային արտադրություններ, սառնարանային տնտեսություններ, հրատարակչություններ, տպարաններ, պահեստներ, նախագծային և կոնստրուկտորական կազմակերպություններ, հանքարդյունաբերական, պոմպակայաններ, կարգավորիչ ջրամբարներ, հիդրոտեխնիկական կառույցներ, կաթսայատներ, տրանսպորտային կազմակերպությունների (ավտոպարկ, դեպո):

բ.գյուղատնտեսական՝ անասնաշենքեր, թռչնանոցներ, ջերմոցներ, պահեստներ, սառնարանային տնտեսություններ:

3. Տեսչական մարմինը քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողությունն իրականացվում է տեսչական, պլանային, ընթացիկ և ըստ անհրաժեշտության ստուգումների միջոցով: Քաղաքաշինական գործունեության ոլորտում տեսչական մարմնի կողմից մշտադիտարկման վերահսկողական աշխատանքների կատարման ընթացքում հայտնաբերված ստուգման ենթակա քաղաքաշինական օբյեկտներում ստուգումները տեսչական մարմնի կողմից կատարվում են ըստ անհրաժեշտության՝ համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N624 որոշմամբ հաստատված կարգի՝ VI. ըստ անհրաժեշտությամն ստուգումների իրականացման կարգ-ի 23-րդ կետի՝ քաղաքաշինական տեսչությունը կարող է ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնել մարզպետարաններում՝ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համապատասխան մարզպետարաններում տեսչական ստուգման ընթացքում անհրաժեշտություն առաջանալիս (փաստաթղթերի համադրում, ընդունված որոշումների կատարման վերահսկողություն և այլն), կառուցվող ու շահագործվող շենքերում ու շինություններում՝ վթարային և մարդկանց ու շրջակա միջավայրի անվտանգությանն սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների, հասարակական կազմակերպությունների, հեղինակային ու տեխնիկական հսկողություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության լիցենզավորման իրավասու մարմնի, այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումների (դիմումների) հիման վրա:

2. ***<u>Տրանսպորտի անվտանգության բնագավառում</u>***

Տրանսպորտի ոլորտում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև ոլորտում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի անվտանգության ապահովման խախտումների բացահայտման, կանխարգելման ու վերացման համար թիրախավորվել են հետևյալ ուղղությունները՝

1. տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից տաքսամոտորային ուղևորափոխադրումների իրականացումը, որում առկա ռիսկերը պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման՝ առանց սակաչափիչի, սակագների և օրենսդրությամբ նախատեսված այլ չափորոշիչների խախտմամբ:

2. ՀՀ տարածքում «Հայավտոկայան» ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման իրականացումը, այսինքն չվացուցակներով սահմանված սպասարկման ռեժիմի համաձայն փոխադրումների կազմակերպման ապահովում, ծառայությունների մատուցում, ուղեբեռի ժամանակավոր պահպանման իրականացում, ուղևորների նստեցման և անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացների ոչ պատշաճ բացակայության շտկումը և վերացումը:

3. Երևան քաղաքում և հանրապետության խոշոր բնակավայրերում՝ սկզբնակետերում/վերջնակետերում գործող ներքաղաքային կանոնավոր երթուղիների սպասարկման իրականացումը,

4. ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման իրականացումը, որը բխում է 27.12.2007թ. ՀՀ կառավարության թիվ 1587-Ն «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին»որոշման պահանջներից, հնարավորինս կանխարգելելու միջպետական ուղևորափոխադրումների ոլորտում առկա ռիսկերը՝ ապահովելով բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով անցած տրանսպորտային միջոցների և ուղևորների սպասարկման անվտանգությունը,

5. ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների կազմակերպումը, որի ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ և դա առաջացնում է հանրապետության ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ:

6. երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երրթևեկության ոլորտում տեխնիկական վերահսկողության իրականացումը, որի ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխատեսման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը շտկելը և վերացնելը.

7. ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հաշվառման և կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, որի ռիսկայնությունը կապված է տրանսպորտի շահագործման և անվտանգության կանոնների խախտումների հետ:

3. ***<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>***

1. Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան մինչև 110կվ լարման էլեկտրաէներգետիկական, 5,8 Մվտ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման և ցածր ճնշման գազի համակարգերում էներգետիկայի բնագավառի գործունեություն իրականացնող տնտեսվարողների նկատմամբ վերահսկողության իրականացումը:

2. Էլեկտրաէներգետիկական համակարգում 110Կվ և բարձր լարման, գազամատակարարման համակարգում գազի միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքներում տեխնիկական ստուգումների իրականացումը:

Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողություն իրականացնելու նպատակով, խախտումներիբացահայտմանևկանխարգելման համար թիրախավորվել են հետևյալ ուղղությունները՝

1. 2018 թվականի ընթացքում նախատեսված և նախկին տեսչության լուծարման պատճառով ստուգումներ չիրականացված էներգատեղակայնքների ստուգումների իրականացում,

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲ, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունների հաշվեկշռում գտնվող 110կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքների և օդային գծերի տեխնիկական ստուգումների իրականացում, շեշտը դնելով ավելի ռիսկայինների վրա, որը կսահմանվի ռիսկիմեթոդաբանությամբ,

3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության հաշվեկշռում գտնվող գազի բարձր և միջին ճնշման տեղակայանքների տեխնիկական ստուգումների իրականացում,

4. Գազի լցակայանների բարձր ճնշման գազաբաշխիչ կայանի տարեկան ծրագրով նախատեսված տեխնիկական ստուգմների իրականացում,

5. Ռիսկի մեթոդաբանության ուղեցույցի հիման վրա հնարավոր կլինի գնահատել մինչև 110կվ լարման էլեկտրատեղակայանքների, ինչպես նաև գազի միջին և ցածր տեղակայանքների առավել ռիսկային օբյեկտների ցանկը, ինչը հնարավություն կտա վերահսկողություն իրականացնել առավելռիսկային էներգատեղակայանքներում:

4. <u>Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման բնագավառներում</u>

1. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ՀՀ օրենսդրությանը համապատասխան գեոդեզիայի և հողօգտագործման անվտանգության նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնում:

Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության նորմերի պահպանման, խախտումների բացահայտման և կանխարգելման համար թիրախավորվել են հետևյալ ուղղությունները՝

1. նախկին ստուգումների արդյունքում հողերի պահպանման վերահսկողության վիճակագությունը ցույց է տվել, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները հանդիսանում են հիմնական ռիսկային օբյեկտները, ուստի տարեկան ծրագրում նախատեսվում է ներառել վերը նշված օբյեկտերը՝ շեշտը դնելով ավելի ռիսկայինների վրա, որը կսահմանվի ռիսկի մեթոդաբանությամբ:

2. նախկին ստուգումների արդյունքում գեոդեզիական կետերի և վարչատարածքային միավորների սահմանանիշերի պահպանման, որակավորում ստացած ֆիզիկական և իրավաբանական անձանց, համայնքների վարչական սահմանների ամրացման և ուղղման աշխատանքների վիճակագությունը ցույց է տվել, որ խախտումները հանդիսանում են հիմնական ռիսկային ոլորտները, ուստի տարեկան ծրագրում նախատեսվում է ներառել վերը նշված օբյեկտները՝ շեշտը դնելով ավելի ռիսկայինների վրա

3. նախկին ստուգումների արդյունքում վերահսկողության վիճակագությունը ցույց է տվել, որ հեթապահ կադաստրային քարտեզների վարման աշխատանքների խախտումները հանդիսանում են հիմնական ռիսկային ոլորտները, ուստի տարեկան ծրագրում, օրենսդրական կարգավորումներից հետո նշված օբյեկտները կնախատեսվեն տարեկան ստուգումների ծրագրում:

5. ***<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում</u>***

1. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ՀՀ օրենսդրությանը համապատասխան տեխնիկական և հրդեհային անվտանգության նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնելը:

2. Ռիսկի մեթոդաբանության ուղեցույցի հիման վրա հնարավոր կլինի գնահատել առավել ռիսկային օբյեկտների ցանկը, ինչը հնարավորություն կտա ստուգումներ իրականացնելիս առավել օպտիմալ օգտագործել մարդկային ռեսուրսը և ավելացնել ստուգվող օբյեկտների քանակը:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության նորմերի պահպանման, խախտումների բացահայտման և կանխարգելման համար թիրախավորվել են հետևյալ ուղղությունները՝

1. տարեկան ծրագրում նախատեսվում է ներառել նաև վառելիքի վաճառքի օբյեկտները և բազաները՝ շեշտը դնելով ավելի ռիսկայինների վրա, որը կսահմանվի ռիսկի մեթոդաբանությամբ.

2. Տեսչական մարմնի մշակվող մեթոդաբանության համաձայն առավել ռիսկային խմբի մեջ են մտնում առևտրի կենտրոնները, ուստի տարեկան ստուգումների ծրագրով նախատեսվում է իրականացնել ստուգումներ նշված ուղղություններով.

3. զվարճանքի և հասարակական նշանակության այլ օբյեկտներ: Նախկին տեսչության հաշվետվություններից պարզ է դառնում, որ տեխնիկական անվտանգության տեսանկյունից պատշաճ հսկողություն չի իրականացվել ատրակցիոնների տեխնիկական վիճակի նկատմամբ:Տեսչական մարմինը թիրախային է համարում նաև նշված բնագավառը և նախատեսում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն իրականացնել նաև նշված ոլորտում.

4. 2016-2018 թվականների տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտում ուսումնասիրությունները վկայում են, որ այդ գործընթացում պակաս կարևորություն է տրվել ուսումնական հաստատությունների և առողջապահական հաստատությունների նկատմամբ վերահսկողությանը, ուստի Տեսչական մարմինը թիրախավորել է նաև նշված ուղղությունները՝ կարևորություն տալով առավել խոցելի խմբերի համար անվտանգության ապահովմանը:

5. Թանգարաններ, պատկերասրահներ, համերգային սրահներ, արխիվներ և այլն:

Տեսչական մարմնի ուշադրության ներքո են գտնվում նաև պետական պահպանության հոգածության տակ գտնվող մշակութային, արվեստի և այլ բնագավառները ևս, ուստի տարեկան ստուգումների պլանավարումը կազմելիս նախատեսվում է ստուգումներ և ուսումնասիրություններ կատարել նաև նշված ոլորտներում, շեշտը դնելով հետևյալ կարգախոսի վրա ՝«այն ինչ հնարավոր չէ վերականգնել՝ պետք է պահպանել»:

3. Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

<u>Առկա խնդիրների ընդհանուր նկարագիրը.</u>

1. Տեսչական մարմնի բնականոն գործունեությանը խոչընդոտող հիմնական պատճառներն են ներքին և արտաքին կանոնակարգումների բացակայությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսների անբավարարությունը (համակարգչային, տրանսպորտային, տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն և այլն), աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակին և իրականացվող գործառույթների ծավալին:

Վերջիններիս առկայության դեպքում Տեսչական մարմինը հնարավորություն կունենա լիարժեք իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները:

2. Ստուգումների գործընթացի բացակայության պայմաններում Տեսչական մարմինը պատշաճ կերպով չի իրականացնում վերահսկողություն, արդյունքում չի բարելավվում վերահսկվող ոլորտների անվտանգությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

3. Ստուգաթերթերի բացակայությունը ոչ միայն բացառում է ստուգումների իրականացումը, այլև չի կանխում հնարավոր իրավախախտումները:

4. Պաշտոնական կայքէջի ոչ լրիվ գործարկումը, որի պատճառովչի ապահովվում հանրության և տնտեսավարող սուբյեկտների պատշաճ իրազեկումը:

5. Վարչական վարույթների և դրանց արդյունքների ամփոփման, ստացվող բողոքներին հետագա ընթացք տալու միասնականկ արգի բացակայությամ բպայմանավորված՝ հնարավոր չէ

պատշաճ հսկողություն սահմանել և հետևողականություն ապահովել վարչական ակտով, կարգադրագրով տրված ցուցումների կատարումը պարզելու գործընթացի նկատմամբ:

6. Տեսչականմարմինն ունի վերահսկողության տարբեր ոլորտներ, որոնցում ռիսկայնության որոշման մեթոդաբանությունները էապես տարբերվում են: Գործնականում մեկ ընդհանուր մեթոդաբանություն ունենալը ոլորտների առանձնահատկություններից ելնելով դեռևս իրագործելի չէ, այն հնարավոր կլինի վերանայել հետագայում:

7. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է ստուգումների հաճախականությունը «միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսվարող սուբյեկտի մոտ», ընդ որում՝ նույնիսկ բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան տարին մեկ անգամ: Նշված կարգավորման պայմաններում ստացվում է, որ սահմանված ժամկետներում Տեսչական մարմինը նույն տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգում կարող է անցկացնել մեկ անգամ և մեկ ստուգաթերթով: Արդյունքում, օրինակ՝ էներգետիկայի բնագավառում համապատասխան ստուգաթերթով անցկացված ստուգումը կբացառի Տեսչական մարմնի կողմից սահմանված ժամկետում նույն տնտեսվարող սուբյեկտի մոտ տեխնիկական և հրդեհային անվտանգությանբնագավառում համապատասխան ստուգաթերթով ստուգման անցկացումը:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների առանձնահատկություններով պայմանավորվածառկա խնդիրները.

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

1. Քաղաքաշինական գործունեության ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերում առկա հակասությունները, ինչպես նաև նշված ոլորտում Տեսչական մարմնի և պետական կառավարման այլ մարմինների գործունեության ոլորտներում տեղ գտած կրկնորդումները, որոնցբացառումը հրատապ է և առաջնահերթ.
2. Փաստաթղթային ձևակերպումների խախտումները,
3. Նախագծային շեղումները.
4. Վարչական վարույթի գործընթացի և արդյունքների ամփոփման կարգի բացակայությունը.
5. Ոչ ճիշտ՝ համապատասխան կարգերից շեղումներով տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքները և շինարարության թույլտվությունները:

<u>Տրանսպորտի բնագավառում</u>

1. Ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից ուղերթի սկզբնակետի և վերջնակետի խախտումները.
2. Չվացուցակների խախտումները.
3. Երթուղայինների կողմից ուղեգծերից շեղումները.
4. Սպիտակ համարանիշներով ապօրինի ուղևորափոխադրումների իրականացումը.
5. Առանց լիցենզիայի և/կամ առանց համապատասխան կահավորման՝ առանց սակաչափիչի, սակագների և օրենսդրությամբ նախատեսված այլ չափորոշիչների պահպանման ուղևորափոխադրումների կազմակերպումը.
6. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների թերի կազմակերպումը, որի ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի

բեռնվածության զանգվածի գերազանցման հետ և առաջացնում է հանրապետության ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ.

7. Երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումները, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխատեսման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը.

8. Ավտոտրանսպորտային միջոցների շահագործման և անվտանգության կանոնների խախտումները:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

1. Ստացված դիմում-բողոքների, ինչպես նաև վերահսկողության ընթացքում բացահայտված՝ էներգատեղակայանքների անվտանգության գոտիներում առկա շենքերի, շինությունների և հողատարածքների խախտումներին առնչվող խնդիրների կարգավորման լուրջ խոչնդոտները (շենք-շինություններիքանդում, էներգատեղակայանքների տեղափոխում և այլն).

2. Բնակելի շենքերում դեռևս տեղակայված 6կՎ կամ 10կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների տեղափոխման հետ կապված խնդիրները (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողհատկացումների դժվարությունները և շահագործող կազմակերպությունների՝ դրանց տեղափոխման հետ կապված ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը):

Վերոնշյալ խնդիրների առկայությունը խոչնդոտում է մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման գործընթացին:

<u>Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման բնագավառներում</u>

1. Բնագավառի առաջնային խնդիրներից է պետական մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու պայմաններում պետական մարմինների կողմից անգործության դրսևորումը:

2. Ոլորտի օրենսդրական խախտումների համար նախատեսված տուգանքների փոքր չափերը:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում</u>

1. Ներկայումս գործող ստուգաթերթերի հարցաշարերում ընդգրկված են հարցեր, որոնք գործնականում գրեթե չեն կիրառվում և, որպես կանոն, ստուգաթերթի համապատասխան սյունակում արվում է «չի պահանջվում» գրառումը:

2. Նշվածի հետ մեկտեղ, մի շարք կարևորագույն պահանջներ, որոնք բխում են գործող նորմատիվ իրավական ակտերի (վերջիններս ուժի մեջ են մտել վերջին 3-4 տարիների ընթացքում), ընդգրկված չեն ստուգաթերթերի հարցաշարերում:

3. Ստուգաթերթերում ներկայումս բացակայում են նաև հարցեր, որոնք վերաբերում են այն բնագավառներին, որոնցում նախկինում առանձին ստուգաթերթերով ստուգում անցկացնելու անհրաժեշտություն չի առաջացել: Օրինակ՝ համատեղ ավտոլցավորման կայաններում ստուգման անհրաժեշտությունը բացակայում էր՝վերջիններիս բացակայության պատճառով: Սակայն ներկայումս առկա է ավտոգազա և բենզալցակայանների (համատեղված լցակայանների) նախագծման և կառուցման ակտիվ միտումներ:

4. 2016-2018 թվականների ընթացքում տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտներում իրականացված ստուգումների ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ այդ

գործընթացում հիմնական շեշտը դրվել է գազալցակայաններում և առևտրի կենտրոններում ստուգումներ անցկացնելու վրա: Վերջինս պայմանավորված էր արտակարգ դեպքերի (հրդեհներ, պայթյուններ) վիճակագրությամբ, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում:Նշված հարցի շուրջ ներկայումս կատարված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ այնպիսի ռիսկային օբյեկտներ, ինչպիսիք են առողջապահական հիմնարկները, գիտական և ուսումնական հաստատությունները, մշակույթի ոլորտի օբյեկտները, տևական ժամանակ է գրեթե չեն ենթարվում ստուգումների (ուսումնասիրությունների):

<u>Բացահայտված ռիսկերը.</u>

1. Հայաստանի Հանրապետությունում գործող և Տեսչական մարմնի կողմից վերահսկվող սուբյեկտների ընդհանուր քանակը, ըստ նախկինում գործող ՀՀ ԱԻՆ աշխատակազմի հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության գնահատականի գերազանցում է 35 հազարը: Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր քանակի 20 տոկոսը դասվում է բարձր ռիսկայնության սուբյեկտների խմբին, 40 տոկոսը՝ միջին ռիսկայնության սուբյեկտների խմբին և մնացած 40 տոկոսը՝ ցածր ռիսկայնության սուբյեկտների խմբին, այսինքն՝ բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված սուբյեկտների քանակը գերազանցում է 7 հազարը, միջին ռիսկայնության խմբինը՝ 14 հազարը, և ցածր ռիսկայնության խմբինը ևս՝ 14 հազարը:

2. Տեսչականմարմնի ավարտական ակտերի հիման վրա կատարված ուսումնասիրությունների ընթացքում քաղաքաշինության բնագավառում հանդիպող հիմնական ռիսկերը վերաբերվում են համայնքների կողմից տրված փաստաթղթերի անհամապատասխանությանը, կառուցապատողի կողմից նախագծային շեղումներին, կառուցապատողեների կողմից տեխնիկական հսկողության բացակայությանը և այլն: Իսկ դիմում բողոքների հիման վրա ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված ռիսկերը հիմնականում վերաբերվում են քաղաքաշինության նորմերի խախտումներին, ինչպես նաև անօրինական շինություններին:

3. Տրանսպորտի անվտանգության բնագավառում քաղաքացիներից և տնտեսավարող սուբյեկտներից ստացված դիմում բողոքների հիման վրա ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ նշված բնագավառի հիմնական ռիսկերը վերաբերվում են կանոնավոր երթուղիների չվացուցակների անհստակությանը, չվացուցակների կրկնություններին, փոխադրողների կողմից չվացուցակների պարբերակար խախտումներին, ինչպես նաև բազմաթիվ ոչ կանոնավոր փոխադրողների առկայությանը:

4. Գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտում ստուգումների գործընթացի բացակայության պայմաններում Տեսչական մարմինը պատշաճ կերպով չի իրականացնում վերահսկողություն, արդյունքում չի բարելավվում վերահսկողության ոլորտների անվտանգությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Այս ոլորտում դիմում-բողոքների սակավ քանակը , հնարավորություն չի տալիս ամփոփ պատկեր ունենալու համար:

5. Էներգետիկայի և էներգասպառման ոլորտում նախկին տեսչության գործառույթներից ստացված տեղեկատվությունը բավարար չէ ոլորտում առկա ռիսկերը գնահատելու համար:

Ստացված դիմում-բողոքների, ինչպես նաև վերահսկողության ընթացքում բացահայտված՝ էներգատեղակայանքների անվտանգության գոտիներում առկա շենքերի, շինությունների և հողատարածքների խախտումներին առնչվող խնդիրները հիմնական ռիսկերն են , որոնց

կարգավորումը լուրջ խոչընդոտների են առնչվում: (շենք-շինությունների քանդում, էներգատեղակայանքների տեղափոխում և այլն):

Բնակելի շենքերում դեռևս տեղակայված 6կՎ կամ 10կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների տեղափոխման հետ կապված խնդիրները (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողհատկացումների դժվարությունները և շահագործող կազմակերպությունների՝ դրանց տեղափոխման հետ կապված ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը):

4. Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը

Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները միտված են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերացմանը, բացահայտված ռիսկերի նվազեցմանը և Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովմանը (Հավելված 1):

Նախատեսված հիմնական միջոցառումները ներառում են.

1.Օրենսդրական դաշտի կարգավորում. Տեսչական մարմինն իր լիազորությունները և կանոնադրական գործառույթներն ամբողջական ծավալով իրականացնելու համար կարիք ունի օրենսդրական դաշտի հստակ կանոնակարգման: Այս համատեքստում նախատեսվում է.

1) լրամշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար ստուգաթերթերի նախագիծը:

2) լրամշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել «Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման (այսուհետ՝ Ռիսկի մեթոդաբանություն) նախագծի վերջնական տարբերակը:

3)մշակել և հաստատման ներկայացնել Տեսչական մարմնի 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

4) Տեսչական մարմնի ներքին գործընթացներն ապահովելու նպատակով հաստատել հետևյալ իրավական ակտերը.

- ստուգաթերթերի լրացման ուղեցույց,
- ստուգումների ուղեցույց,
- ստացվող բողոքներին հետագա ընթացք տալու կարգ,
- վարչական վարույթների գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգ,
- վարչական վարույթի գործընթացի և արդյունքների ամփոփման կարգ:

1. Առաջարկություններ ներկայացնել մեկ տասնյակից ավելի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

2. Տեսչական մարմնի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման ապահովում. ՀՀվարչապետի աշխատակազմ իքաղաքացիական ծառայության գրասենյակի հետհամատեղ նախատեսվում է մշակել և Տեսչականմարմնի կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնել Տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման տարեկան ծրագիրը:

Նախատեսվում է նաև միասնական աշխատելաոճ ձևավորելու նպատակով Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացնել

տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում:

Նախատեսվում է ակտիվ համագործակցություն պետական մարմինների և կրթական հաստատությունների հետ:

Վերահսկողության իրականացում. Իրավական հիմքերի ապահովման դեպքում (Ռիսկի մեթոդաբանության, ստուգաթերթերի, ստուգումների տարեկան ծրագրի հաստատում) օրենսդրության համաձայն նախատեսվում են իրականացնել ստուգումներ:

Մինչ ստուգումների գործընթացը սկսելը՝ ստացված բողոքների, դիմումների, ինչպես նաև վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կիրականացվի համապատասխան վարչարարություն:

3. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.

Առաջնահերթություն ունեցող կարևորագույն միջոցառումներից է Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես, և հանրության, ընդհանրապես, իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Այս համատեքստում նախատեսվում է օգտագործել ՁԼՄ-ների և սոցիալական ցանցերի հնարավորությունները, ինչպես նաև կարևորվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի ամբողջական գործարկումն ու տեղեկատվական սպասարկումը (Հավելված 2):

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1.	Կադրային համալրում	Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովում	ՀՀ վարչապետի աշխատակազմ	Տեսչական մարմին	1-ին կիսամյակ
2.	Ռիսկի մեթոդաբանության նախագծի մշակում և ներկայացում հաստատման	Տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության որոշում, ստուգումների տարեկան ծրագրի կազմում, ստուգումների գործընթացի ապահովում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանումներ	1-ին կիսամյակ
3.	Ոլորտային ստուգաթերթերի մշակում և ներկայացում հաստատման	Ստուգումների անցկացման գործընթացի ապահովում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանումներ	1-ին կիսամյակ
4.	Ստուգումների տարեկան ծրագրի կազմում և ներկայացում հաստատման	Ստուգումների գործընթացի ապահովում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1-ին կիսամյակ
5.	Պաշտոնական կայքէջի լիարժեք գործարկում	Իրազեկման և խորհրդատվության ապահովում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հրապարակման ենթակա իրավական ակտերի և տեղեկատվության հրապարակում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ
6.	Տարածքային խնդիրների լուծում, տեխնիկական և գույքային հագեցվածություն	Կառուցվածքային ստորաբաժանումների՝ մեկ տարածքում միավորում, վերապահված լիազորությունների առավել օպերատիվ կատարում, ժամանակի արդյունավետ օգտագործում	ՀՀ վարչապետի աշխատակազմ	Տեսչական մարմին	2-րդ եռամսյակ
7.	Տեսչական մարմնին հասցեագրված դիմում բողոքների ընդունման և հետագա ընթացքի կարգի մշակում	Հնարավորություն կտա ունենալ հստակ ընթացակարգ դիմում-բողոքներին լիարժեք արձագանքելու և	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառութ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ

		դիմումատուներին պատասխանելու համար: Յուրաքանչյուր ստորաբաժնման համար կհստակեցվի մոտեցումները, իրենց իրավասության շրջանակները:	յան վարչություն		
8.	Ստուգումների ուղեցույցի կազմում	Ստուգումների պլանավորման, նախապատրաստման, իրականացման և ստուգման արդյունքների ամփոփման կանոնակագված գործընթացի առկայություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	3-րդ եռամսյակ
9.	Տեղեկատվական բազաների ստեղծում	Տեսչական մարմնի ստուգումների արդյունքում կստեղծվի բազա, որը հնարավորություն կտա կազմել ռիսկայնության պրոֆիլը	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	տարվա ընթացքում
10.	Ինտերակտիվ ֆորմատով կայքում հրապարակում	Կայքում կհրապարակվեն համապատասխան ֆորմատով նյութեր, որոնք կունենաննա մեկնաբանության հնարավորություն	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	տարվա ընթացքում
11.	Յուրաքանչյուր բնագավառին առընչվող իրավական ակտերի հոդվածների, ժողովածուների հրապարակում	Հնարավորություն կտա ոլորտին առընչվող տնտեսվարողներին և ֆիզիկական անձանց ստանալ ամփոմ տեղեկատվություն՝ իրենց հետաքրքրող իրավական ակտերի մասով	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն, ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	տարվա ընթացքում
12.	Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման	Վարչականվարույթիվերաբերյալգործերիկանոնավորվարմանևտեղեկությունների, փաստաթղթերիևայլնյութերիմասինարա	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն, ռիսկի	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումնե ր	3-րդ եռամսյակ

	գրանցամատյանների վարման կարգի հաստատում	գուհեշտիրազեկմանհնարավորության ապահովում տնտեսվարող սուբյեկտենրի համար, վերլուծությունների և հաշվետվությունների ապահովում վարչական ակտով տրված առաջադրանքների կատարման նկատմամբ հսկողության ապահովում	գնահատման և վերլուծությունների վարչություն		
13.	Վարչական վարույթների գործընթացի և արդյունքների ամփոփման կարգի հաստատում	Վարչական վարույթների ամփոփմանը ներկայացվող կանոնակագված քայլերի առկայություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանումներ	2-րդ եռամսյակ
14.	Իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման վերաբերյալ նախագծերի կազմում և ներկայացում	Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
15.	Վերահսկողության և ստուգումների իրականացում առողջապահական հիմնարկներում, գիտական և ուսումնական հաստատություններում, մշակույթի ոլորտի օբյեկտներում	Առավել խոցելի օբյեկտների անվտանգության ապահովում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
16.	Տեսչական մարմնի մասնագետների վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում	Տեսչական մարմնի աշխատողների հիմնական ունակությունների, մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում, միասնական աշխատաոճի ձևավորում և կատարելագործում	Որակի ապահովման վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանումներ	4-րդ եռամսյակ

17.	ՀՀ մարզերի տարածքում և Երևանում գործող ավտոկայարաններից, ավտոկայաններից, ե/կետերից իրականացվող միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր երթուղիների սպասարկման կազմակերպման գործընթացների նկատմաբ ուսումնասիրությունների, դիտարկումների և վերահսկողական գործառույթների իրականացում	Տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ թույլ տրվող իրավախախտումների հայտնաբերում և արձանագրում	Տեսչական մարմնի ՀՀ մարզերի տարածքային բաժինների և Երևանի տարածքային բաժին	Տրանսպորտային անվտանգության վարչություն	Տարվա ընթացքում
18.	ՀՀ մարզերում, Երևան քաղաքում՝ «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայաններից և այլ չնախատեսված կայանատեղերից իրականացվող միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ողևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ ուսումնասիրությունների, դիտարկումների և վերահսկողական գործառույթների իրականացում	Տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ թույլ տրվող իրավախախտումների հայտնաբերում և արձանագրում	Երևանի տարածքային բաժնի տեսչական բաժամունքի տրանսպորտային անվտանգության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
19.	ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքարշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկելն առանց այդ ճանապարհների տնօրինողի թույլտվության նկատմամբ վերահսկողության իրականացում	Տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ թույլ տրվող իրավախախտումների հայտնաբերում և արձանագրում	Տեսչական մարմնի ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի տարածքային բաժիններ	ՀՀ ՃՈ ծառայություն	3-րդ եռամսյակ

20.	Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության անվտանգության ոլորտում ուսումնասիրումների, դիտարկումների և տեխնիկական վերահսկողության իրականացում	Հայտնաբերել և արձանագրել տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ թույլ տրվող իրավախախտումները	Երևանի տարածքային բաժնի և ՀՀ մարզերի (բացի Վայոց Ձորի և Սյունիքի) տարածքային բաժիններ	Տրանսպորտային անվտանգության վարչություն	Տարվա ընթացքում
21.	«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխ-ն մասին» ՀՀ օրենքի ոլորտին առնչվող հոդվածների փոփոխությունների և լրացումների կատարում	Իրավախախտումների համար վարչական տույժերի սահմանման, դրանց համաչափ կիրառման ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	2-րդ եռամսյակ
22.	Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների քաղաքաշինական վարչություններում և բաժիններում տեսչական ստուգուների իրականացում փոփ-խ ՀՀ կառ. 1998թ. հոկտեմբերի 12-ի N624 որոշման մեջ	Տեսչական ստուգումների արդյունավետ իրականացում Երևան քաղաքում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Քաղքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	3-րդ եռամսյակ
23.	Միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսվարող սուբյեկտում ստուգումների հաճախականության խնդիրը լուծելու նպատակով «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացում	Քանի, որ Տեսչական մարմինը ստուգումներ է իրականացնում տարբեր ոլորտներով, օրենքի գործող դրույթների փոփոխությունը հնարավորություն կտա ստուգումներ իրականացնել նույն տարում տարբեր ոլորտներով:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	2-րդ եռամսյակ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

N	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1	Պաշտոնական կայքէջի մշտական թարմացում և տեղեկատվական սպասարկում	Իրազեկման և խորհրդատվության ապահովում, Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հնարավոր իրավախախտումների կանխարգելում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
2	«Թեժ գիծ» ծառայության գործարկում	Բարձրացված խնդրիներին արագ արձագանքման հնարավորություն, խորհրդատվության և հավաստի տեղեկատվության տրամադրման ապահովում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
3	Մամուլի հաղորդագրությունների կազմակերպում՝ Տեսչական մարմնի կողմից անցկացած ստուգումների և ստացված դիմում-բողոքների արդյունքների վերաբերյալ	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
4	Տեսչական մարմնի ղեկավար անձանց հարցազրույցների կազմակերպում	Տեսչական մարմնի և ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ համագործակցության բարձրացում, հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
5	Բուկլետների, բրոշյուրների կազմում և տարածում,	Հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և	Կառուցվածքային և տարածքային	Տարվա ընթացքում

	սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում		հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	ստորաբաժանումներ	
6	Տեսչական մարմնի ստացած (գրավոր, «Թեժ գծով» և այլ եղանակներով)դիմում-բողոքներիվիճակագրության վարում	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում առկա խնդիրների բացահայտում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
7	Բոլոր հասանելի միջոցներով «տեսչական ստուգման» նկատմամբ քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների մոտ դրական վերաբերմունքի ձևավորում	Տեսչական մարմնի վստահության (վարկանիշի) բարձրացում, մասնագետների կողմից իրենց լիազորությունների անխոչընդոտ իրականացում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Տարածքային ստորաբաժանումներ	Տարվա Ընթացքում
8	Հանդիպում-քննարկումներ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ղեկավարության հետ	Համագործակցության բարձրացում, Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների անվտանգության ապահովում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ
9	Հանդիպում-քննարկումներ Հայաստանի ճարտարապետների միության ներկայացուցիչների հետ	Համագործակցության բարձրացում, Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների անվտանգության ապահովում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ
10	Հանդիպում-քննարկումներ ՀԿ-ների ներկայացուցիչների հետ	Համագործակցության բարձրացում, ռիսկերի հայտնաբերում և բացառում, կանխարգելիչ միջոցառումների	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում

		կազմակերպում	տարվող աշխատանքների բաժին		
11	Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում նոր նաձեռնությունների և ծրագրերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվությունների տրամադրում և հանրային քննարկումների կազմակերպում	Տեսչական մարմնի վստահության (վարկանիշի) բարձրացում, վերահսկողության ոլորտների անվտանգության ապահովում, ճշգրիտ տեղեկատվության տրամադրում, վերահսկվող ոլորտներում անվտանգության ապահովում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
12.	Հանդիպում-քննարկումներ – խորհրդատվություններ մարզպետարանների, համայնքների, Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող քաղաքաշինության բնագավառի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ	Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովում, Տեսչական մարմնի վստահության (վարկանիշի) բարձրացում, գործունեության թափանցիկության ապահովում	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
13.	Հանդիպում-քննարկումներ – խորհրդատվություններ քաղաքաշինության բնագավառի սուբյեկտների հետ	Տեսչական մարմնի վստահության (վարկանիշի) բարձրացում, գործունեության թափանցիկության ապահովում, ռիսկերի հայտնաբերում և բացառում	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում